Հուսիկ Արա

Դրախտ և դժոխք

Ի՞նչ պիտի ասեմ այնտեղ՝ երկնքում,
որ Աստծո՞ւ հետ էի շփոթել քեզ երկրի վրա.
ու պիտի դատե՞ն ինձ:

Իմ ընկերոջ փոխարեն սիրեցի քեզ՝
ինչպես իմ անձը,
որովհետև իմ մերձավորը դու ես:
Երկնքի նմանությամբ ու երկրի
և ջրերի մեջ եղածների մաքրությամբ
քեզ կուռք սարքեցի:

Որպեսզի
զուր տեղը չտամ մեր տեր Աստծու անունը,
ես ամեն առիթով քո անունը կանչեցի:

Չպահեցի շաբաթը,
որովհետև այդ օրը չկարողացա քեզ հանել ինձնից,
իսկ իմ հորը և մորը քեզ ունենալով պատվեցի:

Գողացել եմ քո ծառի արգելված պտուղը
և մարդկանց հոգնությունը հանձնել,
որ աշխարհում գեղեցիկը չպակասի:
Սպանել եմ ինձ,

որ իմ փոխարեն էլ դու լինես.
երկու դու ու ոչ մի ես:

Արդյոք ստե՞լ եմ ասելով՝
դու ես լույսը և խավարը,
դու ես սկիզբը և վերջը,
դու ես կյանքը և մահը:

Եթե քեզ սիրելը շնանալ է.
ես այդ դժոխքը չեմ փոխում դրախտի հետ:

h. գ.
Աստծու հետ էի շփոթել քեզ,
իսկ դու սատանային մատնեցիր ինձ: